ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՔԱՐԱԳԼԽԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

2013-2016թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆԸ

25. 01. 2013թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ է եռամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեյի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները

Հավելված – 1 համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:

Հավելված – 2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

Ի՞ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Քարագլուխ գյուղը վերաբնակեցվել է 1820թ. մարտ ամսից : Գյուղը ավելի հին է քան ենթադրվուն է, որի վկայությունն է գյուղի տեղական խաչքարերը ու եկեղեցին:
Վայոց Ձորի մարզի Քարագլուխ համայնքը գտնվում է Վարդենիսյան լեռնաշղթայի ստորին գոգավորության վրա: Ծովի մակարդակից 1600-3300մ բարձրության վրա: ՈՒնի քաղցրահամ ջրերի մեծ հնարավորություն: Հողերը քարքարոտ է, կտրտված, տարիների ընթացքում ենթարկվել է էրոզիոն պրոցեսների դարձել է գյուղատնտեսական մշակման համար ոչ պիտանի:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է ամռանը մեղմ բարեխառը կլիմայով:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են _ _ _ բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության _ _ _ %-ը: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. երեխաներ(0-6տ) --------- 47
2. դպրոցական(7-17տ) --------- 130
3. 18-62 տարեկան --------- 247
4. թոշակառու --------- 170
5. հաշմանդամներ --------- 42
6. աշխատունակներ ---------- 500

Գյուղն ունի 218 ծուխ, որոնցից 26-ն ընդգրկված են <<Փարոսի>> համակարգում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի (գյուղապետի) կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

- Տեղակալ ----- 1դրույք
- Աշխատակազմի քարտուղար ----- 1 դրույք
- Գլխ. Հաշվապահ ----- 1 դրույք
- Հավաքարար ----- 1 դրույք

Համայնքի ենթակառույցներն են՝

Մշակույթի տուն

- Տնորեն --------- 1 դրույք

Գրադարան

- Գրադարանավար --------- 1 դրույք

Աշխատակազմի և ենթակառուցվածքների ամբողջ ապարատը բաղկացած է _ _ _ հոգուց: Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառուցվածքների կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14. 03. 1997թ.-ի թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով (տես հավելված 2)

- Մշակույթի տուն --------- 1 միավոր
- Գրադարան --------- 1 միավոր
- Բուժկետ --------- 1 միավեր
- Զբոսայգի ----------
- Վարչական շենք --------- 1 միավոր
- Ոռոգման ցանց --------- 1 միավոր
- Ջրմուղի ցանց --------- 1 միավոր
- Գազի ցանց ----------
- Գյուղ տեխնիկա և գործիքներ ----------

Տնտեսական անկման հետևանքով, համայնքի գույքի ֆիզիկական վիչակը վատթարացավ: Պահեստամասեր և քսայուղեր չլինելու հետևանքով անմխիթար վիչակում են գյուղ. տեխնիկան ու գործիքները: Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1988թ.-ին, որի մաշվածությունը այնքան մեծ է, որ ջրի կորուստը հասնում է 25 - 30%-ի: Անձրրաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որը վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը:

Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի; Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 3կմ ճանապարհ և փողոցներ;

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով՝ մոտ 15% -ով:

Չկա խողովակներ ու կիսախողովակներ խմելու ջրի և ոռոգման ներքին ցանցերը վերանորոգման համար; Խմելու ջրի մատակարարումը հաճախ կատարվում է ընդհատումներով՝ տնտեսական ճգնաժամի և ջրամատակարարման ցանցի մաշվածության պատճառով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 218 առանձնատուն, 17500 հազ. քմ. տարածքով: Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը 23 –ից ավել է, որը տարեցտարի աճում է: կան բազմաթիվ կիսավթարային շենքեր, որոնք տնտեսական ճգնաժամի պատճառով չեն վերանորոգվում:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

- Համայնքի վարչական տարածքը --------- 2267 հա, որից
- Վարելահող -------- 306 հա
- Խոտհարք -------- 55 հա
- Արոտավայր ------- 401 հա
- Անոգտագործելի հողեր ------- 505 հա
- Ձորեր ------- 915,6 հա
- Դաշտային ճանապարհներ ------- 24 հա
- Գերեզմանոց ------- 0,6 հա
- Տնամերձ հողեր ------- 78 հա
- Դպրոց ------- 1 հա
- Հուշարձան -------- 1 հա
- Գյուղամիջյան փողոցներ ---------4,8 հա
- Սեփականաշնորհված հողեր ------- հա որտեղ
- Մեկ հողաբաժինի չափը ------- 0,27 հա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման ջուր չունենալու պատճառով համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղ. մթերքների արտադրությունը: Հիմնականում զբաղվում են կարտոֆիլի, բանջարա-բոստանային կուլտուրաների արտադրությամբ: Այս արտադրությունը կախված է բնության քմահաճույքից: Անձրևային տարիներին որոշ չափով դեռ կարելի է բերք հավաքել, իսկ երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի 50-60%:

Անասնապահությանբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Երաշտի տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում: Խոտի և խտացված կերի անբավարարվածության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի 1 միջնակարգ դպրոց, վերջին տարիներին վերանորոգված, բարվոք վիճակուն ուր սովորում է 128 աշակերտ: Դպրոցն ունի 27 աշխատատեղ, մեկ ուսուցչին ընկնում է 6-7 աշակերտ: Անմխիթար վիճակում է դպրոցի խմելու ջրի ցանցը, որն անհապաղ վերանորոգման կարիք ունի :

ՄՇԱԿՈՒՅԹ,ՍՊՈՐՏ, ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 1 մշակույթի տուն, 5 հին կիսավթարային վիճակում, 15 անավարտ շինություններ են, որի պատճառով համայնքը զրկվել է հասարակական միջոցառումներից, կինոյից, թատրոնից: Գործող գրադարանն ունի 8290 անուն գիրք, շենքը գտնվում է բարվոք վիճակում:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը :

Բարեփոխումներ կատարելով, նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին,

- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում
- Համայնքն ապահովել մշտական խմելու ջրով և կանխել սուր վարակիչ հիվանդությունները
- Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազտ ժամերին
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը համայնքի տարածքում :

3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՐԱՁՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ներածություն

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1988թ.: Ջրագծի երկարությունը կազմում է 9 կմ:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Վերջին տարիներին տնտեսակն անկման և ֆինանսական աղության պատճառով շարքից դուրս է եկել մոտ 20 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագծերը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ վերանորոգման ենթակա ջրագծերը անցնում են լեռնային տարածքով, որտեղ անձրևաջրերից ու գարնան ձնհալից առաջանում են սելավներ և մեծ վնաս հասցնում խողովակաշարին : Սելավների պատճառով խողովակներ ջարդվում են ու փչանում; Համայնքի հրատապ խնդիրներից է խմելու ջրի ջրագծերի հիմնական վերանորոգումը :

Ընդառաջենով բնակչության դիմումներին, այուն ծրագրով առաջարկվում է հիմնական վերանորոգման ենթարկել համայնքի ջրամատակարարման ցանցը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են

- Ապահովել համայնքը շուրջորյա խմելու ջրով
- Նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները
- Երաշտի տարիներին բանջարա-բոստանային կուլտուրաները փրկել երաշտից
- Կանխել կեխտաջրերի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- Կնքել պայմանագիր Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ, որի համաձայան ծրագրով պահանջվող գումարի 80%-ը կհատկացվի հիմնադրամի կողմից , իսկ 10%-ը համայնքային բյուջեյից և համայնքի ներդրումներից ,
- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերը
- Հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքներն իրականացվող կապալառու շին կազմակերպությունը,
- Ձեռքբերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ,
- Կազմել ԾԻԳ համայնքի անդամներից, կատարվող աշխատանքները վերահսկելու համար

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, համայնքը 100%-ով կապահովվի շուրջօրյա խմելու ջրով, կնվազի խմելու ջրի կորուստները, ներկայիս 20-30%-ից հասնելով 3-5%-ի , կբարելավվի գյուղի աղգաբնակչության սոցիալ- տնտեսական պայմանները:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական մոտավոր հաշվարկներով 9կմ երկարությամբ ջրագծերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 30 000 ԱՄՆ դոլար:

ԾՐԱԳԻՐ 2

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի մշակույթի տունը ունի 60 տարվա պատմություն, որն վերջին տարիների տնտեսական անկման ու ֆինանսական սղության պատճառով

5.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հ/Հ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2008թ. փաստ	2009թ. փաստ	2010թ.		2011թ. կանխ	2012թ կանխ.
					փաստ	կանխ		
	1	2	3	4	5	6	7	8
1	Համայնքի տարածքը	հա	117.7	117.7	117.7		117.7	117.7
2	Բնակչության թիվը	մարդ	931	935	930	935	930	935
3	ծնունդ	մարդ	7					
4	մահաածություն	մարդ	8					
5	Աշխ.Ռեսուրս այդ թվում	մարդ	280	280	283	285	290	290
	Ա զբաղվածները ըստ Տնտեսության ճյուղերի	մարդ	200	200	200	200	210	210
6	Գործազրկ. մակարդակ	%						
7	Առեվտրի և հասարա-Կականսնոնի օբեկ.թիվը	հատ	3	3	3	3	3	3
8	Պահուստ. հող	հա						
9	Պահուստ. հողերի օգտ. մակարդակը	%						
10	Խմելու ջրի ներհամայնք. ցանցի երկարություն	կմ	4	4	4	4	4	4
11	Ներհամ. ոռոգման ցանցի երկարություն	կմ	7	7	7	7	7	7
12	Ոռոգման համակարգում ընկած հողեր	հա	80	80	80	80	80	80
13	Ներհամ. Փողոցների և Ճանապարհների երկար.	կմ	15	15	15	15	15	15
14	Չբարեկարգված փողոց. և ճանապ. Երկարու.	կմ	15	15	15	15	15	15
15	Մասնավոր բնակ. ֆոնդ	հազ.քմ	16700	16700	16700	16700	16700	16700
16	Բնակկարիքավ.ընտ.թիվ	հատ	25	27	30	30	35	35
17	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	Լիտր/օր	20	20	20	25	25	25
18	Ջրի կորուստ. ցանցում	%	30	30	30	30	30	30
19	Սովորողների թիվը դպր.	մարդ	120	122	125	125	125	125
20	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների թիվ	մարդ	11	11	12	12	13	13

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյունատնտեսական տնտեսությունների թիվը 218,

2. գյուղ. տեսակների հիմնական տեսակների արտադրությունը. ց/հա
   - Կարտոֆիլ ----- 200
   - Կաթ ----- 800 լ-1կ
   - Բանջարա-բոստանային կուլտ. -----150

3. Ցանքատարածություններ
   1. կարտոֆիլ ----- 11
   2. բանջարա-բոստանային կուլտ. ----- 2.1

4. անասնագլխաքանակ, հատ
   1. խոշոր ողջերավեր անասուն --- 368 գլուխ
   2. այդ թվում կովեր --- 198
   3. մանր եղջերավոր անասուններ --- 448
   4. այդ թվում մայրեր --- 374
   5. թռչուններ --- 727
   6. այդ թվում հավեր --- 626
   7. մեղվաընտանիքներ --- 205

5. գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը, հատ այդ թվում
   Մասնավոր սեփականություն
   - թրթռուռավոր տրակտոր ----- 2
   - անիվավոր տրակտոր ------ 2
   - գութան ------1
   - բեռնատար մեքենաներ ----- 20